1	2	3	4
Սեբաստիա	2	1	2
Սիվրիհիսար	1	1	—
Ուրֆա (Եդեսիա)	—	1	—
Շատախ	—	3	—
Շապինքարահիսար	—	1	—
Թարսուս (Տարոն)	1	3	—
Թալաս	—	1	—
Թեքիրտաղ (Ռոդոստո)	—	1	—
Թոքաթ (Եվդոկիա)	1	3	—
Թրապզոն (Տրապիզոն)	3	9	7
Քղի	—	1	—
Վան	5	24	—

Օսմանյան կայսրության հպատակ հայերը, 3 դեկտեմբեր 1839 թվականին հայտարարված Կյուլհանեի բարենորոգումներեն անմիջապես վերջ և մինչև Թուրքիո հանրապետության կազմությունը, տպագրական մարզին մեջ բուռն թափով շարունակվող իրենց գործունեության շնորհիվ, սատարած են թրքական տպագրության ճարտարարվեստին, հրատարակության և գրավաճառության զարգացումին և այսպիսով նպաստած են օսմանյան մտավորականության վերափոխություններու հետամուտ ամեն տեսակ շարժումներուն։ Այստեղ կը ներկայացնենք միայն մի քանի փաստեր, որոնք կը հաստատեն այս իրողությունը։ Բավական է նշել և ներկայացնել այն քանի մը ականառու անձնավորություններու կյանքն ու գործունեությունը, որոնք մեծապես նպաստած են 1839—1922 թվականներուն մեջ ինկած ժամանակաշրջանին օսմանյան Թուրքիո տպագրական և տառաստեղծումի աշխուժացման։

Պողոս Արապյան կամ Արապօղլու—Տպարանատեր և գրաձուլիչ։ 1742-ին ծնած է Ակնի Ապուշեխ գյուղը և 1835-ին մահացած է Կ. Պոլիս։ Որդին է տպարանատեր Հովհաննես Աստվածատրյանի։ Սուլթան Սելիմ Գ-ի իշխանության օրով, երբ տակավին փոքր էր, իր հոր հետ կուգան Կ. Պոլիս և կը հաստատվին Այազմա թաղը։ Տպագրության և տպարանային արհեստը իր հորմեն սորվելե վերջ, Պողոսը նախ իր հոր, ավելի հետո իր զավակներուն հետ, 70 տարի ծառայեց այս ասպարեզին մեջ և դարձավ Թուրքիո ամենեն նշանավոր տպարանատերը և միևնույն ատեն նպաստեց Թուրքական տպագրության զարգացումին։

Արապյանը, ինչպես ըսինք, նախապես աշխատեցավ իր հորը տպարանին մեջ (1766—1769) և կարճ ատեն մը վերջ համբավի տիրացավ որպես տպարանատեր և գրաձուլիչ։ Վրաստանի թագավոր Հերակլ